

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի հայրենակիցներ: Անցած ուսումնական տարում մեր բազմաթիվ շրջանավարտներ ու աշակերտներ իրենց լավագույն կողմերով դրսևորեցին ինչպես առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի, այնպես էլ՝ բուհական ընդունելության քննությունների ժամանակ: Անառարկելի է, որ նրանք իրենց մտավոր կարողություններն անմնացորդ կծառայեցնեն մեր երկրի գիտական, տնտեսական ու մշակութային առաջընթացին, կդառնան հզոր ու նոր Հայաստանի կերտողներն ու պաշտպանողները: Ճանաչելով ու գնահատելով մեր ուսուցիչների նվիրումը եւ աշակերտների ուսումնատենչությունը՝ վստահ եմ, որ Նոր ուսումնական տարում հետետողական աշխատանքի շնորհիվ մենք կունենանք ավելի ակնառու հաջողություններ, որակական նոր փոփոխություններ:

Նոր ուսումնական տարվա մեկնարկի եւ Գիտելիքի օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ մանկավարժներին, աշակերտներին ու ծնողներին, ցանկանում ամենայն բարիք, խաղաղությամբ, առողջությամբ ու հաջողություններով լի տարիներ, եռանդ ու նվիրում ուսումնառության մեջ, կայուն գիտելիքների ձեռքբերում:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան